

## ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

ՄԻ ՏԻՐԱՀՈՎԱԿ ԶՐՊԱՐՏՈՂ

«Մշակ» կոչուած թերթում հօ ծածկագրով մի զրպարտութիւն կար իմ մասին։ Ես այդ նամակին պատասխանեցի «Առևայշ»-ում «Վայ ձեզ Փարիսեցւոց կեղծաւորաց» վերնագրսվ։

Մի անգամ ընդ միշտ ասեմ ի լուր աշխարհի, որ 1875 թուից սկսած միմիայն և միայն Մշակ լրագիրն է, որ սիստեմատիքարար հայհոյում և զրպարտում է ինձ և Կովկասի ու արտասահմանի ոչ մի ուրիշ հայ լրագիր երբէք չէ տուել ինձ Մշակի փողոցային հայհոյանքներից և ոչ մինը. սա խիստ կարեոր մի հանգամանք է, որի պատմութիւնը մի այլ անգամ կտամ։

Դառն է ճշմարտութիւնն առնասարակ նոցա համար, որոնց գէվիզն է ստութիւն և կեղծիք. և մեր ճշմարթ նկատողութիւններն ու անինայ մերկացումները անշուշտ խիստ են գալարել հօի աղիբներն ու նորան դուրս քաշել թագնուած որջից։ Այս անգամ նա հանդէս է եկել Հ. Առաքելեան ստորագրութեամբ նոյն թերթի 206 համարում «կուտել մեզ ի վերայ մեղաց»։

Հաւատարիմ շարունակ զրպարտելու և հակասութիւնների մէջ գլորուելու սովորութեան, «Մշակն» իւր «տիրահոչակ», գլխաւոր աշխատակցի ժանգու գրչով այս անգամ էլ նոյնն է անում։ Առաջին յօդուածում Հօն հանդէս էր եկել սրպէս նախանձախնդիր եկեղեցականութեան (այն կեղծիք էր). այս անգամ Հ. Առաքելեանի շրթունքներով արհամարհում է և հայ հոյում եկեղեցականին «տէրտէրական»), մութ ոյժեր, տիրահաչակ Գիւտ քահանայ, կեղտատ միջնորդութիւններ, կեղտոտ

\*.) Մեր կոչումը ի պարծան մեր քահանայութիւնն է. այդ պատճառով Մշակը մեր թերթը կոչումէ տէրտէրական. այդ արամարանութեամբ Մշակը մածնային է, որպիսեան նրա խմբագի կոչումը մածոն մերելն է։

ակնարկներ, ոտից գլուխ թաթախուած կեղտի մէջ, անբարեկիղճ  
աշքակապ սրիկաներ» եւ այլն եւ այլն անուանելով:  
Ահա այն մարդարիտների շրջաը, որ բոլոր հայ եկեղեցիների  
ծխական, բոլոր ազգային դործերի փողը բաղադրչի, բոլոր միջազգա-  
յին կօնգրէմներում «գասախօս», Հնդկաստանի, Պարսկաստանի,  
Խօրասանի, Համադանի, Բիրմանիայի ևն պատգամաւոր, «մտա-  
ւոր տղրուկ» չ. Առաքելեանը մեզ նուէր է բերում. մարդարիտ-  
ներ, չ. Առաքելեանի բերնին լալեղ:

Աշխարհին յայտնի է, որ չ. Առաքելեանը հայհոյանքների  
մի անփոփոխ բառարան ունի, միևնոյն մարդարտաշար բառե-  
րով հայհոյել է նա մեզ և ուրիշ անդամ, որին պատասխանել  
ենք «Հումայում», «մտաւոր տղրուկ» յօդուածով և զաքարէա-  
կան պապանձման դատապարտել նորան:

Բայց քննենք նամակի միւս կէտերը:

Երբ մի չարաճճի երեխայի գետին են գլորուս և խեղ-  
դում, որ մի փոքր խելքի դայ, նա տակից հայհոյում է ու  
բղաւում. «կաց՝ հէրս գայ ասեմ, տես քեզ ինչ կանի»: Նոյն  
վիճակի մէջ է ընկել Առաքելեանը: Մենք նորա տգեղ արարք-  
ները երեխին տալով նեղն ենք լծել. նա փոխանակ ներում  
խնդրելու, լալկան երեխայի նման սպառնումէ ասելով՝ կաց,

Ա. Ահարոնեանը գայ ասե՞մ:

Ինչ կապ ունի Ահարոնեանը Առաքելեանի հետ ունեցած

բանակոռուի հետ:

Այս երկրորդ անդամ մենք հրապարակով հարցնում ենք  
Առաքելեանին, ի՞նչ ասել է մուլթ ոյժեր. որմնը են մեր պատ-  
կառելի աշխատակիցներից մութ ոյժերը ՅԱԿԱՆԷ ՅԱՆՈՒԱՆՆԵ և  
պահանջում ենք փաստեր այդ մասին:

«Լուսան» ասումէ, թէ Մշակի խմբագիրը հաշիւ չի տուել  
հրատարակչական ընկերութեան դրամների և գոյքի. պատի-

պատ խօսքերը գրօշ չարժեն. առուէք հաշիւը:

«Լուսան» ասումէ, թէ եկեղեցու աղէտի ժամանակ անկիւն-  
ներում թագկացաք, իսկ աղէտից յետոյ «առաջնորդարանի  
կատու» էք դառնել էլ չէք գուրս գալիս. պատասխանն այն  
պիտի լինի, որ ապացուցանէք, թէ ինչ զործեք կատարեցիք  
աղէտի ժամանակ, ինչ մասնակցութիւն ունեցաք որևէ բողո-  
քող ժողովում, ինչնու առուժեցիք ձեր հայրենասիրութեան  
համար:

«Լուսան» ասումէ. դուք գողացել էք Շւտախ 200 երեսա-  
նոց աշխատութիւնը, կողոպտել նորա մտքի արդիւնքը և ձեր  
անունով հրատարակել, Պ. Առաքելեան: Նոյն բանը «Հումայից»  
կամայ

առաջ «Տարազն» է ասել, իսկ դուք պատէպատ էք ընկնում եւ, չեք կարողանում արդարանալ.

«Հուման» շատ բան է ասել ձեր մասին և դեռ շատ բան ունի ասելու:

Ձեր առարկութիւնների պատասխանը դուք ստացաք պետություն, որին դուք թերուս էք անուանում (հետաքրքիր է իմանալ թէլինչ նօմէր ունի ձեր դիպլոմը և Պարսկաստանի մոր համալսարանից), մենք ձեզ մի խորհուրդ ենք տալիս. երբ ձեր մարդկային սխալանքների մի մասը ձեր երեսովն են տալիս, աւելի լաւ է լոէք և օգտուէք:

Այս ըստ էութեան, այժմ մի քանի խօսք Պ. Առաքելեանի պօլէմիկայի ձեփ մասին: Պ. Առաքելեանին մի մարդ իւր սառ-ռագրութեամբ մեղաղրումէ մի խոշոր գրական գողութեան մէջ, որ ինքը Առաքելեանն էլ չէ հերքում, ասելով թէ արդարեւ ինքն օգտուելէ այդ աշխատութիւնից. իսկ Առաքելեանը կա-րելի է համարում այս հարցի մասին գրելիս «Հումայի» խմբա-գրին հայինյելու և «Հումայի» աշխատակիցներին մութ ոյժեր-անուանել, մինչ դեռ այդ աշխատակիցների ծնկներում աւելի լու-սաւոր մտքեր կան և աւելի խելք, քան Պ. Առաքելեանի զլ-խում: Ի՞նչ կապ Շումայի» աշխատակիցների և Հ. Առաքելեանի ու Շուտի մէջ ծագած վէճի մէջ. այս միևնույնը կլինի, եթէ մենք այսօր ասենք, թէ Պ. Առաքելեանը բոլոր իւր ներկայ և ապա-գայ բանակիւններում մեղաւոր է, որովհետեւ Առաքելեանի ազգա-կաններից կամ անուանակիցներից մէկը եօթանասնական թուա-կաններին թաւրիզի ոռուսական հիւպատոսարանից մի դօկու-մէնտ գողանալու համար, ասում են, մեղադրուելիս է եղել և դատուել է երեւանի նահանգական դատարանում: Արդեօք սա-ապացմայց է թէ Պ. Հ. Առաքելեանցը մեղաւորէ այս կամ այն խնդրում կամ միթէ սրանից կարելի է եղրակացնել, թէ դիցուք, նա կոնդակ է գողացել:

ԳիհՏ Ա. Ք. ԱՂԱՆԵԱՆՑ